

հոգին այս աշխարհումն այլ ևս չէ ժպտում ինձ, եւ որոնց
հող գառնալու մարմնի վերայ ման են գալի ոռ մրրկոլից քա-
միներդ ու անձրելի թուխ թուխ ամոլերդ։
Ես հանգիստ եմ որտով. ամեն մի իմ գլխիս գալու բանին
պատրաստ եմ։ Ասուծոյ թագաւորութեան մէջ ամենոյն բան
ներդաշնակութեան մէջ է. ուրեմն ինչպէս կարելի է, որ հո-
գիների համերաշխարութիւնը կարուի—Ասուծով զնում
եմ նոր տարւոյս առաջն։

(Թարգմ. Գէլմ.)

Գրիգոր Խոյնկոսպոս Աղափիրեանց.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԱՐՄՆԱՄԱՐԳՈՒԹԵԱՆ ԳԵՂԱՍԻՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆՆ

(Ծ-Ր-Ա-Հ-Ք. Լ. ՔԵՐԸ)։

Մարմնամարզութիւնն նպաստում է նաև գեղասիրական կրթութեան, որովհետեւ դա մարդու, նախապատ'երի ամենագեղեցիկ արգասիրի մարմ-
նական և հոգեկան ներդաշնակութեան զարդարնելն իրեն վերջնական նպա-
տակ է գրած։ և ինչպէս որ Գեղօթէն ասումէ, թէ գեղեցիկը և թէ բա-
րին մի գերակայ (ideal) է, որն երբէք յերեան չը գար, սակայն նորա
փայլն ստեղծող հոգու հազարաւոր արտայայտութիւնների մէջ տեսանելի է
լինում։ Գեղեցիկ է այն իրը, որի ձևն նորա գաղափարի (idee) ամենակա-
տարեալ արտայայտութիւնն է և Պղատնի ասելով մարդու գեղեցկութիւնը
պէտք է աստուածային գաղափարի արտայայտիչ լինի։ Մարդկային մարմինն մի
ձեւ է, այն է, նորա մէջ եղած հոգու երեսոյն ուղղուած դեպի զգայական
աշխարհ։ և հոգու ամեն մի ազնուացումն պէտք է որ յայտնի փոխա-
գարձ ներդործութիւնների միջոցին, որոնք հոգու և մարմնի մէջ տեղի են
ունենում։ մի ազնուացնող ազգեցութիւն առաջինի (մարմնի) վերայ ու-
նենայ, ինչպէս ընդհակառակն ձեմ գեղեցկացումն առանց գաղափարի
վերայ ներդործիու չը մնար. նոյն իսկ իմաստուն Սոկրատէսի տգեղ կեր-
պարանքն այնպէս նորա գեղեցիկ հոգւով զարդարված էր, «որ նորա
տպեղութիւնն գեղեցկութեան փոխուեց», ամեն մի ցանցառ մարդու մօտ
կարելի է նկատել թէ մի կարծ ժամանակ վարժուելուց զինի ձեմ կազ-
մութիւնն հոգու վերայ ինչպէս է ազդում։

Ա. ԶԵԽԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆ.

Դ Բայուր Հալիքի Հաների Հերդաշնութեան վարդապետական համարդութեան մասին մարդութեան մէջ ինքնըստինքեան գեղեցիկ մարմնամարզական տեղի վերայ այնպէս դեղեցիկ կրվարժութիւն որ նորա բոլոր մասերն հաւասարաշափի կրզարդանան։ Աարժութիւնների մի ճիշտ դասաւորութեամբ պէտք չէ որ մի անդամ միւսի հաշով զարդանայ ի վնաս միւս անդամների, այլ բոլորի վերայ պէտք է հաւասարապէս ուշք դարձնել։ Եթէ մենք ամեն օր այն երեսյթն ենք նկատում, որ շատ անդամ գործիքով ամենալաւ մարզողներ քայլուածքի և կեցուածքի մէջ անտաշ և կոպիտ են, այդ տեսակ հետեւանքը մեզ չըպիտի ուսումնարանական կանոնաւոր մարմնամարզութիւնից փախցնէ, որովհետեւ այն երեսյթը յառաջ է եկել շարունակ գործիքով մարզուելուց բարձ ի թող առնելով ազատ վարժութիւններ։ Աւու մնարանական մարմնամարզութիւնն ոչ դիտաւորութիւն և ոչ էլ ժամանակ ունի լարախաղացներ պատրաստելու, նա աշխատու մէ ներգործել այն բանի վերայ, որ բազուկներ և ռաներ մի և նոյն ժամանակ մօանան և ամրանան իսկ կրծքի ծաւալը մեծանայ, այնպէս որ սկզբու մ տրուած պատկերի ձեր անփոփոխ և անվնաս մնայ, հենց զրա համար անհրաժեշտ է որ թոյլ մասեր այնքան մարզուին ու վարժուին, որ նոքա միւսների հետ ներդաշնակութեան մէջ դանուին։

2. Ո-ՃԷ ՀԵ-ՇԵ-ԱՆ Ա-Ն-Ե-Լ-Ա.

Եթէ որ մարմնի բոլոր մասերի ներդաշնակ զարդացումն ինքնըստինքեան արդէն մարմնի գեղեցկութեան համար մի անթողելի նշանակութիւն ունի, այն ժամանակ նրա նշանակութիւնն ևս առաւել կրրարձրանայ, եթէ բոլոր անդամներ հաւասարաշափ ուժի լիութիւնն ստացած են։ Ինչ չափով մարդ ուժի լիութեան և կամքի ուժգնութեան մէջ առաւելած է, այնչափով ևս գեղեցկութեան մէջ կառաւելու ։ Գեղեցիկ չետարդեօք մի զօրեղ լեցուն կազմուածքով մարմին լի գործունեութեան եռանդով տեսնել։ Այս թէ տղաների և թէ աղջիկների համար միւնոյն է, միւնոյն է վերջիններիս համար այն պայմանով, որ կանացի վայելու շտեսքը չըվտանգութիր, որովհետեւ ուժը սպասումն ևս այր մարդուց, նա օրէնքի արժանաւորութիւնն կը հաստատէ, սակայն կինը միմիայն իւր վայելշատեսութեամբ տիրապետած է և տիրապետումէ։

5. ՃԵՂՊ ՌԵ-Հ-Ա (Präcision).

Նախ ձեր իւր կենդանութիւն ստանումէ գործածութեան, կեցւածքի, զնացքի և զանազան ժամանակու շարժողութիւնների մէջ։ Մարմնամարզու-

թեան մէջ ամրապնդած անդամներն ընդունակ են գառնումբոլոր շարժողութիւններ վստահութեամբ և որոշմունքով կատարելու . միմիայն շարժողութիւններ՝ ճիշտ որոշման մէջ է կայանում անդամների գեղեցկութիւնը . — Քնայած ութիւն գանգաղութիւն և ցրուածութիւն նորահակառակ կողմերն են .

4. ԿԵՇԱՆ-Ճ+:

Բոլոր գեղասիրական յարաբերութիւնների հիմնական ձեւը որի մէջ մարդկային մարմններեւումէ և պիտի երեայ է կեցուածքը . որն և արդ պատճառով մարզական տեղի վերայ բոլոր վարժութիւններից առաջինն է համարեւում և բոլոր վարժութիւնների մէջ տեղի է ունում . ոչ մի մարմնամարդական ժամ չանցնէր . ոչ մի վարժութիւն չկատարուէր . որի մէջ կեցուածքին մի շարպւնակ ուշագրութիւն չբնուիրուի . թէ զործիքով մարզուելիս և թէ աղատ վարժութիւններ կատարելիս . 2է՞ որ մարմնի ուղիղ կեցուածքը այն առանձնայատկութիւններից մինն է . որով Աստուած մարդուն կենդանիներից աղնուացրեց . Եթէ նա յիրաւի տիրոջ ստեղծագործութեան մի զարդ պիտի լինի . պէտքէ որ նա խնամուի . Մարմնամարզութիւնը հոգու և տանում այն մասին . որ աշակերտը ոչ թէ իրեն մեքենայ ձեւացնէ այլ խօսքի համաձայն իրեն պահպանէ և շարժուի . այնպէս որ նորա կեցուածքը ամեն քնայածութիւնից աղատ . որոշ , ամօր , դօրիղ և բնական լինի . որովհետեւ « մի վստահ դիրք » , ասումէ Ռուսոն . միշտ ախորժ ազդեցութիւն ունի . և ամենաամուր կեցուածքը մի և նոյն ժամանակ ամենավայելու չն է . և ընդունելով միայն որ նա սկզբնական (Ճնշումից) բռնութիւնից աղատութեան բնականութեան է հասած :

5. ԳՆԵՑ+:

Ինչպէս որ կեցուացքը կամքի ուժգնութեան աստիճանի հաւատութիւնը պատկերն է . նոյնպէս և զնացքը ոչ պակաս վստահութեամբ որոշումէ մարդու ամբողջ հոգեկան էութիւնն . նա խառնուածքի (Temperament) և հոգու տրամադրութիւնների հիմնական ձեւերին համապատասխանումէ և փոփոխումէ դրանց համաձայն . Սակայն նորա բոլոր փոփոխութիւններն . ինչ տեսակ ևս նորա սկզբնական մարմնի և հոգու յատկութիւնների հիման վերայ կազմակերպուած լինին , այնու ամենայնիւ կարող են և պէտքէ որ գեղեցիկ լինի . դորա համար է որ գնացքը ամեն մի մարմնամարզական ժամին պիտի առանձնապէս խնամուի . որպէս զի նորան շարունակ վարժութեամբ ամրութիւն . վստահութիւն , հաւատարաշափութիւն . թէ թէ ութիւն և աղատութիւն տրուի . որոնքի միասին մի գեղեցիկ գնացք են կազմում . և որովհետեւ այդ . ինչպէս և պար և լող , մի զուգորդած մկանային շարժողութիւնների խմբից է բաղկացած . որոնք ամբողջի վերայ ներդաշնակաբարի միասին ներգործումն . ուստի պէտքէ որ նորա իրենց ճիշտ որոշման մէջ (Präcision) հետ զհետէ այնշափ վարժուին . մինչև որ նորա կամքի իշխանութիւնից աղատուին . որի ազդեցութեան ներքոյ նրանց միայն խմբակցել և ուսանել հնարաւոր էր . թէ գնացքը և թէ կեցուածքը այն ժամանակ

միայն զեղեցիկ են, եթէ որ նոքա բռնութեան, դիտաւ որութեան և կամքի
զարկի ամեն մի հետքը կորցրած են, Նոքա այն աստիճանի վայելու և կը
դառնան. Ինչ շափով որ կամքի դրդիշները հեռացած են և մի զեղեցիկ
բնութեան օրուես հետեւանքներ ինքն ըստ ինքեան կը զարգանան.—Մի զե-
ղեցիկ քալուածքը սովորացնելու համար առանձին նշանակութիւն ունի
կարգերը, որոնք ներդաշնակ միմեանց մօտ լինելով և զանազան քայլերի շա-
փուոր փոփոխութեան քալուածքին մի առանձին վայելչութիւն և զեղեց-
կութիւն են տալիս. Մի բացարձակ զեղեցիկ քայլուածք շատ հազուազիւ-
է, բայց, ուր նա յերեան է զալիս, զարթեցնումէ մարդու մէջ, ինչպէս և
ամեն զեղեցիկ բան, անպայման հաճութիւն.

6 ቤት-ታወቂያ የተደረገው-በት-ኩል (Gebärden und Gesten)

Վերջապէս ծամածուռ շարժողութիւններ և չը պիտի արհամարհէլ, չը
նպյելով որ միմիկան և պարելու տրուեստը ուսումնարանական մարմնա-
մարզութեան չեն պատկանում։ Նրանք իրենց շափաւոր և ճիշտ գործա-
դրութեամբ վայելչութեան բաւական շատ նպաստած կլինին. սակայն ման-
կավարժական մարմնամարզութիւնն ընախօսական - հոգեբանական գործողու-
թիւնների միջոցին, որոնք իւրաքանչիւր մարդուն ի ընէ յատուկ են աւելի
խուսափող գրութիւն է ստանում։ Քան թէ նրանց զարգացնելուն և կատա-
րելագործելուն նպաստում։

Արդպետը առաւելապէս այստեղ պիտի աշխատի խռովագին արուելուականութիւնից և միայն ի բնել եղած ծամնծուռ շարժողութիւնը չափաւոր կերպով զարգացնել։ Այստեղ պէտք է միշտ ի նկատի ունենալ որ ամեն շարժողութիւնների չափաւորս թիւնն ու հանդւտացների ազնիւ մարդու պարզ նշանակ են։

Բ. ԳՐԱՓԱՐՄԵՐԻ ԿԱԶՄԱՆԵՐՊՈՒՄՆ

Մարմնի բոլոր մասերի ներդաշնակ զարգացմամբ, ուժի վութիւնն շնորհելով, բոլոր շարժողութիւնների մէջ ճիշտ որոշում՝ անելու սովորութեամբ և մի շնորհալի կեցուածք, վայելու չ քայլուածք և արժանաւոր ծամածու շարժողութիւններ ձեռք բերելով մարմնամարզութիւնն հնար է տալի այն ձեխն այն է մարդկային մարմնին, «որպէս թանձրացեալ մարդկային հոգու գործարանին և երեսյթին»: ոչ թէ միայն հոգու վայելու կրող և ընդունակ գործիք լինելու, այլ և նորա (հոգու) բովանդակութեան, այն է նորան ոգեորող գաղափարների, ամենամաքուր հայելի և պարզ տիպար գառնալու: Չեի կազմակերպութիւնն է միայն մի միջոց դէպի նորատակը:

4. **q. t. q. - - k. p. - f. - n. h. k. h. - f. - n. - - r. k. d. - n. n. k. p.**

թէ ինչպէս մարմնամարզութիւնն զաղափարների հետ անմիջական յարերութեան մէջ է գտնուում, այդ պարզ երեւում առաջին մասից, Ուշագրութեան, Հնազանդութեան, արթնութեան, կարգի, արիութեան, խաղընթեան և լճուականութեան միջնորդական առաքինութիւններն, որոնք

ժարգով աշակերտի մէջ պիտի ինսամունին ու կաղմունին, մի և նոյն ժամանակ գեղեցիկ և անթողելի նախաստիճաններ են բացարձակ գեղեցիկ վերաբերմանմբ, առանց նոցա բոլորովին անչնարին է աշակերտի մէջ գեղասիրական հետաքրքրութիւն (interesse) զարթեցնելու, ուր մնաց թէ մենք գեղասիրական արդառաւորութիւն ձեռք բերենք:

2. ԳԵՂԱԿԱՐՔԻ ՀԵՐԱԼԵՐԵՐ (Ldeale).

Անմիջական առարինութիւններ, կամքի ուժգնութեան և ներքին ազատութեան բարոյական գաղափարներն. որոնք մարզական տեղի վերայ պատաստութիւն. մի և նոյն ժամանակ նաև գեղասիրական գերակայններն են, և նորանց զարգացումն սանիկի թէ բարոյական և թէ գեղասիրական կրթութեան համար բարեյածող են. ինչպէս առհասարակ, եթէ մասնագիտորէն նոյնելու լինինը բարոյական գիտութիւնն (Ethik) գեղասիրական գիտութեան մէջ (Esthetik) ամփոփուած է. Բարեացակամութեան, հանրա-մտածմունքի և հայրենասիրութեան առաքինս. թիւնների մէջ բարոյականութիւն ոչ միայն իւր հաստատութիւնն է զանում, այլ և նոքա են նաև մի ճշմարիտ գեղեցիկ հոգու արտայացութիւններ. այսպէս այն ամենը, ինչ որ մարմնամարզութիւնն բարոյականութիւնն զարգացնելու համար անումէ, մի և նոյն ժամանակ յօդուած գեղասիրական կրթութեան է կատարուում, այդ երկուսը միմեանց հետ այնպէս սերտ յարաբերութեան մէջ են, որ Շիլլերն ասումէ, «բարի գործիք, զու կը մօտեցնես մարդկութեան աստուածային բոյս. կաղմիլ գեղեցիկ». Դու կը տարածես աստուածային բոյսի սերմերն».

3. ԳԵՂԱԿԱՐՔԻ ՀԵՐԱԼԵՐԵՐ-ՆԵՐՆ.

Մնումէ միայն որ գեղասիրական զգացմունքը կրթելուն և ինամելուն առանձին հոգացողութիւն նույնել. իւրաքանչիւր վարժութեան մէջ ուսուցիչը պիտի աշխատէ տղեղն հետացնել և միայն օրինակներով գեղեցիկը ցայց տալ, և թէ որ աշակերտներ հանապազ այդ օրինակներն իրենց աշքի առաջ անմիջական դիտողութեան ներքոյ ունին, այն ժամանակ նոքա գեղեցիկի բնութեան համաձայն, գորանից հաճութիւն կստանան և կաշխատեն իրենց մէջ լստ այնու օրինակել և կաղմակերպել. որովհետեւ գեղեցիկի հաճութեան մէջ կայ մի և նոյն ժամանակ ձգտումն նոյնը բարբով խօսքով ու վարբով արտայայտել.

4. ԳԵՂԱԿԱՐՔԻ ՀԵՐԱԼԵՐԵՐ-ՆԵՐՆ.

Եթէ մի անդամ աշակերտի մէջ գեղասիրական հետաքրքրութիւն զարթած է, այն ժամանակ մարմնամարզական ուսուցումն կրթութեան սյդկողմի համար ամենանշանաւոր մաս շահած է. որովհետեւ հետաքրքրութիւնն կամեցողութեան արմատն է և գորանով ևս արարինը, և հենց այդ է պատճառ որ բազմակողմանի հետաքրքրութիւնն իրաւամբ բոլոր կրթութեան կենդրուացման կէտ է համարուած. Ուր գեղասիրական հետաքրքրութիւնն իսկապէս գոյութիւն ունի, այնտեղ պէտք հոգերանական օրէնքին համա-

ձայն նորան գեղի գեղասիրական արգասաւորութիւն տանել, և մի աշակերտ, որի մէջ այդ արգեն զարթած է, կաշխատի իւր բոլոր արարքներն և շարժողութիւններն գեղեցկացնել, իւր ազնիւ բարոյական մտածմունքներն ամենազնիւ ձեերի մէջ արտայայտել: Առօրեայ կեանքի նոյն ինքն ամենափոքր իրի ազնուացումն հասարակական իրականութեան ազատ-գեղասիրական վարժունքի մէջ, մի գողեցիկ հոգու պարզ նշանակն է:

Եթե մենք այն ամենը, ինչ որ մարմնամարզութիւնն յօդուա զեղասիրական և բարոյական կոթութեան անումէ, ի մի ամփոփենք, կարող ենք կարծացապես ասել որ դա մարմնամարզութիւնն մի նշանաւոր լծակ է մի բարոյապես զեղեցիկ բնաւորութեան կոթութեան համար, այնպիսի բնաւորութեան, որն բարոյական գերակայներ զեղեցիկ ձևի մէջ իրականացնումէ և նորանց իրականացնելով՝ իւր վսեմութիւնն էլ կերեայ. Թէև մենք չեղք կարող իւրաքանչիւր ցեղ անպայման զեղեցիկ գործնել այնու ամենպայման կերպ ձգտենք որ ամեն աշակերտի մէջ առողջ հոգի առողջ մարմնի մէջ բնակուի:

U. S. L. P. V. a p p h e l h a n g.

Քաղաքածք Պելլմ. Մանկավարժական ամսագրից:

ԱՇԽԱՐՀԻ ԼԵԶՈՒ ԵՒ ՔՆԱԿԱՏՈՒԹԻՒՆ

Պ. Փիլ. Վարդանեանի «Հոմերի Ելիականը»:

(၁၅၈ - ၂၇ - ၂၀၁၂)

Ճ. Առ զիրը գրաբոտի մէջ բոլոր միւս բաղաձայներից առելի է հանդի. Առ զիրը գրաբոտի մէջ բոլոր միւս բաղաձայներից առելի է հանդի. Համ բառեր վերջանում են նուով, չհաշուած զիմուշ նուն, զիմուշ. Համ բառեր վերջանում են նուով, չհաշուած զիմուշ նուն, զիմուշ. Բեր որով տալիս են մեր լիզուին ոնդային արտասանութիւն և ձայն. Թերեւ հայկական քթի անտարազ մեծութիւնն էլ իրեւ պատճառ կամ հետեանք է այդ բանին:

Այդ բանին՝ Աշխարհաբարձուղ կերպով կը ճատել է նուերը, ուստի և ա-
յս ժամանակ քարեյածուղ կանոնական կառավագանք նոր լիզուն նուերով ծանրա-
բութեատար կամ գրաքանի հետեւթեամբ նոր լիզուն (անուն անուն անուն) և յն գարձել են ուսում, հեր-

(*) Ամերիկայի Հարաբերական բարեստում առաջին կաթնը՝ Ճուկնը, Մուկնը եւլն.